

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռը սրտի անհուն վշտով տեղեկացավ, որ Կիլիկիո Կաթողիկոսության անունով գործող հերձվածող Անթիլիասի աթոռակալ Տ. Զարեհ Եպիսկոպոս Փայասլյանը 23 ապրիլ 1958 թվակիր որոշումով փորձում է իր հովանու ներքո առնել Ամենայն Հայոց Հայրապետության Թեհրանի թեմը։

Շատ տխուր է մի անգամ ևս արձանագրել, որ Անթիլիասի աթոռակալը հայտնի ու ծածուկ բոլոր միջոցներով, դավադիր ուժերի անխիղճ թելադրությանց ներքև, հափշտակիչ ոտնձգություններ է կատարում, կամենալով անջատել սփյուռքի մեր եկեղեցիները և մեր ժողովուրդը իրենց Սրբություն Սրբոց Ս. Էջմիածնից և այսպիսով ծրագրված ձևով քանդել Հայաստանյայց Ս. Եկեղեցվո հազարամյա հիմքերը։

Հերձվածող Անթիլիասի այս նոր հափշտակության փորձի առթիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը հայտարարում է ի գիտություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Նվիրապետական Աթոռներին, առաջնորդություններին, հոգևոր պաշտոնյաներին, ազգային-եկեղեցական իշխանություններին և համայն հայ հավատացյալ ժողովրդին, որ՝

1) Թեհրանի Հայրապետական բազմադարյան թեմը հափշտակելու փորձի մեջ, մի անգամ ևս դատապարտվում են՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 20 դեկտեմբերի 1957 թվականի սրբատառ կոնդակով արդեն իսկ դատապարտված Անթիլիասի ապօրինի աթոռակալ Տ. Զարեհ եպիսկոպոս Փայասլյանը և նրա գործակիցները՝ իրենց այս նոր արարքի համար։

2) Թեհրանի Թեմական Պատգամավորական ժողովի 1958 թվականի փետրվարի 26-ի, ինչպես նաև Տ. Զարեհ եպիսկոպոսի 1958 թվականի ապրիլի 23-ի որոշումները հակաօրինական են և հակառակ՝ Թեհրանի թեմի հավատացյալ ժողովրդի կամքին և հոգևոր-ազգային շահերին։

3) Մայր Աթոռը այդ որոշումները նկատում է չեղյալ։ Իրանի Հայրապետական երեք թեմերը, այդ թվում նաև Թեհրանի թեմը իր եկեղեցիներով և հավատացյալ ժողովրդով եղել են, կան և կմնան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանության ներքո։

4) Կանոնական-իրավական տեսակետից և մեր սուրբ ավանդությունների և պատմական իրավասության լույսի տակ, հնարավոր չէ Ս. Էջմիածնից բաժանվել և կապվել այլ եկեղեցական կենտրոնի։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

12 հունիսի 1958 թ.
Ս. Էջմիածին

ՀԱՅԿ ԴԵՊՏԻՄՈՍ
ԱԿԱԴԵՄԻԱ